ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՂԵԿԱՎԱՐ

N _____

0047 ՀՀ Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
(374-10) 65-05-53, 65-03-05
Էլ. փոստ info@hlib.am

«21» մարտի 2022թ.

ՈՐՈՇՈՒՄ

ԹԻՎ 180222-184 ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և հաշվի առնելով փաստաբան Քրիստինե Ավագյանի կողմից ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին (այսուհետ՝ Տեսչական մարմին) ուղղված դիմումում առկա տեղեկատվությունը, Տեսչական մարմնում 2022 թվականի փետրվարի 18-ին հարուցվել է թիվ 180222-184 վարչական վարույթը՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ում (այսուհետ՝ Կազմակերպություն) ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ, 13-րդ, 85-րդ, 109-115-րդ, 152-րդ, 154-րդ, 223-րդ, 224-րդ, 226-րդ և 265-րդ հոդվածների պահանջների պահպանումը պարզելու նպատակով:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածով՝ Տեսչական մարմնի մասնագետների կողմից Կազմակերպության գործունեության հասցեում (քաղաք Երևան, Մյասնիկյան պողոտա 20) իրականացվել է զննում, որի արդյունքում պարզվել է որ.

1. Երևանի քաղաքապետի 2021 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 3404-Ա որոշմամբ հաստատվել է Կազմակերպության կառուցվածքը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը, որտեղ առկա չեն Կազմակերպության տնօրենի առաջին տեղակալի և տեղակալի հաստիքներ, այն է՝ տեղի է ունեցել հաստիքների կրճատում:

2. Կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարը, ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 3-րդ մասով, 115-րդ հոդվածի 2-րդ մասով, 129-րդ հոդվածով, 130-րդ հոդվածով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2021 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 3404-Ա որոշումը, 2021 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 120-Ա հրամանով տնօրենի տեղակալ Գայանե Գրիգորյանին 2021 թվականի սեպտեմբերի 25-ից ազատել է աշխատանքից:

3. Կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարը, ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 3-րդ մասով, 115-րդ հոդվածի 2-րդ մասով, 129-րդ հոդվածով, 130-րդ հոդվածով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2021 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 3404-Ա որոշումը, 2021 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 119-Ա հրամանով տնօրենի առաջին տեղակալ Վլադիմիր Սիմոնյանին 2021 թվականի սեպտեմբերի 25-ից ազատել է աշխատանքից:

4. Կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարը, ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 224-րդ, 226-րդ հովածներով և հիմք ընդունելով Կազմակերպության իրավաբան Քրիստինե Ղասումյանի զեկուցագիրն ու Վաղինակ Խաչատրյանի գրավոր բացատրությունը, 2021 թվականի հոկտեմբերի 08-ի թիվ 136-Ա հրամանով շահագործման և մատակարարման բաժնի էլեկտրիկ Վաղինակ Խաչատրյանին աշխատավայրում ոգելից խմիչքի ազդեցության տակ գտնվելու պատճառով 2021 թվականի հոկտեմբերի 11-ից ազատել է աշխատանքից (Վաղինակ Խաչատրյանը 2021 թվականի հոկտեմբերի 08-ին իր կողմից ներկայացված գրավոր բացատրությամբ հաստատել է, որ գտնվում է ալկոհոլի ազդեցության տակ):

5. Կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարը, ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 224-227-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հարություն Հովհաննիսյանի 2021 թվականի դեկտեմբերի 16-ի զեկուցագիրը՝ բեզուարյան այծի, քարակաքավի և լորիկետների անկման վերաբերյալ, 2022 թվականի հունվարի 05-ի թիվ 03-Ա հրամանով՝ անկված կենդանու նկատմամբ կատարված միջոցառումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ

0047, ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am

կատարելու համար, Կազմակերպության գլխավոր կենդանաբույժ Հարություն Հովհաննիսյանի նկատմամբ կիրառել է «Նկատողություն» կարգապահական տույժը: Մինչև կարգապահական տույժի կիրառումը Հարություն Հովհաննիսյանը 2022 թվականի հունվարի 03-ի զեկուցագրով տվել է խախտման մասին գրավոր բացատրություն:

5.1 Կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարը, ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 224-227-րդ հոդվածներով և հիմք ընդունելով «Կենսաբանության և հիդրոէկոլոգիայիգիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի մոլեկուլային մակաբուծաբանության լաբարատորիայի ավագ գիտաշխատող Օ. Վ. Ծչերբակովի կողմից 2021 թվականի դեկտեմբերի 23-ին կազմված Կենդանու ախտաբանաանատոմիական դիահերձման արձանագրությունը՝ 2022 թվականի հունվարի 05-ի թիվ 03/1-Ա հրամանով կենդանիների առողջության վերաբերյալ անհրաժեշտ միջոցառումները պատշաճ չկազմակերպելու, Կազմակերպության գլխավոր կենդանաբույժ Հարություն Հովհաննիսյանի նկատմամբ կիրառել է «Խիստ նկատողություն» կարգապահական տույժը: Մինչ կարգապահական տույժի կիրառումը՝ 2021 թվականի դեկտեմբերի 29-ին Հարություն Հովհաննիսյանից պահանջվել է խախտման մասին գրավոր բացատրություն:

5.2 Կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարը, ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 9-րդ կետերով և հիմք ընդունելով Կազմակերպության իրավաբան Քրիստինե Ղասումյանի 2022 թվականի հունվարի 05-ի զեկուցագիրը, 2022 թվականի հունվարի 07-ի թիվ 06-Ա հրամանով Կազմակերպության գլխավոր կենդանաբույժ Հարություն Հովհաննիսյանին 2022 թվականի հունվարի 08-ից ազատել է աշխատանքից, մինչդեռ, նշված հրամանից պարզ չէ, թե Հարություն Հովհաննիսյանն աշխատանքային կարգապահության ինչպիսի խախտում է կատարել: Միաժամանակ, «ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 9-րդ կետերի հիմքերով աշխատանքային պայմանագրի լուծում» կարգապահական տույժը կիրառելիս Հարություն Հովհաննիսյանից չի պահանջվել խախտման մասին գրավոր բացատրություն:

0047, ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am

6. Կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարը, ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 9-րդ կետերով և հիմք ընդունելով Կազմակերպության իրավաբան Քրիստինե Ղասումյանի 2021 թվականի դեկտեմբերի 14-ի, շահագործման և մատակարարման բաժնի պատասխանատու Արսեն Առուշյանի 2021 թականի դեկտեմբերի 11-ի, նույն բաժնի տնտեսական գծով պահեստապետ Գագիկ Սահարյանի 2022 թվականի հունվարի 05-ի զեկուցագրերը, 2022 թվականի հունվարի 05-ի թիվ 05-Ա հրամանով՝ 2021 թվականի նոյեմբեր ամսին առանց հարգելի պատճառի աշխատանքի չներկայանալու և պաշտոնի անձնագրով ամրագրված իր պարտականությունները չկատարելու համար, Կազմակերպության շահագործման և մատակարարման բաժնի անվտանգության գծով պատասխանատու Հենրի Սարխոշյանին 2022 թվականի հունվարի 06-ից ազատել է աշխատանքից: Մինչ «ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով աշխատանքային պայմանագրի լուծում» կարգապահական տույժը կիրառելը՝ Հենրի Սարխոշյանից չի պահանջվել խախտման (բացակայության) մասին գրավոր բացատրություն:

7. Կազմակերպությունում աշխատանքային պայմանագիրը կնքվում է երկու օրինակից՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, որի մեկ օրինակը գործատուն հանձնում է աշխատողին:

8. Աշխատողներին հանգստի և սնվելու համար տրամադրվում է մեկ ժամ տևողությամբ ընդմիջում, ինչը սահմանված է Կազմակերպության ներքին կարգապահական կանոններով և աշխատանքային պայմանագրերով:

9. Կազմակերպությունում ընդունված ներքին և անհատական իրավական ակտերը համապատասխան անձանց պատշաճ կարգով իրազեկվել են, իսկ աշխատանքային պայմանագրերը լուծելու մասին անհատական իրավական ակտերի մեկ օրինակը հանձնվել է աշխատողներին:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի և 38-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հարուցված վարչական վարույթի բազմակողմանիությունը, լրիվությունը և օբյեկտիվությունն ապահովելու նպատակով 2022 թվականի մարտի 17-ին Տեսչական մարմնում տեղի է ունեցել վարչական լսում, որին ներկա էին

0047, ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am

փաստաբան Քրիստինե Ավագյանը և Կազմակերպության ներկայացուցիչ Քրիստինե Ղասումյանը:

Փաստաբան Քրիստինե Ավագյանի կողմից բարձրացված այն հարցին, թե ինչու Կազմակերպության աշխատողներին չեն տրամադրվում աշխատանքային հանդերձանք և նախատեսված չեն հանգստի և սնվելու համար պատշաճ պայմաններ, Կազմակերպության ներկայացուցիչ Քրիստինե Ղասումյանը պատասխանեց, որ Կազմակերպությունում աշխատանքային հանդերձանք չի եղել, տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարը դրանք պատվիրել է, աշխատողներին կտրամադրվեն ձեռք բերելուց հետո: Ինչ վերաբերում է հանգստի և սնվելու համար պատշաճ պայմանների տրամադրմանը, պատասխանեց, որ յուրաքանչյուր աշխատողի համար Կազմակերպության ներքին կարգապահական կանոններով և աշխատանքային պայմանագրերով սահմանված է հանգստի և սնվելու համար ընդմիջում, որն աշխատողն օգտագործում է սեփական հայեցողությամբ:

Փաստաբան Քրիստինե Ավագյանի այն հայտարարությանը, որ կան դեպքեր, երբ աշխատողներին չեն տրամադրվել իրենց վերաբերելի անհատական իրավական ակտերը, Կազմակերպության ներկայացուցիչ Քրիստինե Ղասումյանը հայտնեց, որ բոլորին էլ տրամադրվել են անհատական իրավական ակտերը՝ տարբեր միջոցներով՝ էլեկտրոնային, փոստային առաքանու և առձեռն:

Փաստաբան Քրիստինե Ավագյանը տեղեկացրեց նաև, որ Հարություն Հովհաննիսյանի և Հենրի Սարխոշյանի նկատմամբ կիրառված կարգապահական տույժերը և ազատման հրամանները բողոքարկվել են դատական կարգով:

Վարչական մարմինը, ուսումնասիրելով վարչական վարույթի նյութերը, լսելով կողմերին, հաստատված է համարում, որ.

1. Կազմակերպությունում պահպանվել են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ, 13-րդ, 85-րդ, 109-112-րդ, 114-115-րդ, 152-րդ, 154-րդ, 223-րդ հոդվածներիի պահանջները, այն է՝ Կազմակերպությունում ընդունված ներքին և անհատական իրավական ակտերը համապատասխան անձանց պատշաճ կարգով իրազեկվել են: Աշխատանքային պայմանագրերը կնքվում են երկու օրինակից՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով,

որի մեկ օրինակը գործատուն հանձնում է աշխատողին: Աշխատանքային պայմանագրի լուծումը ձևակերպվում է գործատուի ընդունած անհատական իրավական ակտով, որի մեկ օրինակը հանձնվում է աշխատողին: Հաստիքների կրճատման հիքով աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում աշխատողը գրավոր ծանուցվում է ոչ ուշ, քան երկու ամիս առաջ: Աշխատողներին հանգստի և սնվելու համար տրամադրվել է մեկ ժամ տևողությամբ ընդմիջում, ինչը սահմանված է Կազմակերպության ներքին կարգապահական կանոններով և աշխատանքային պայմանագրերով: Օրենքով չնախատեսված կարգապահական տույժեր աշխատողների նկատմամբ չեն կիրառվել:

2. Կազմակերպությունում չի պահպանվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածի պահանջը, այն է՝ մինչև կարգապահական տույժի կիրառումը Հարություն Հովհաննիսյանից և Հենրի Սերխոշյանից գրավոր կերպով գրավոր բացատրություն չի պահանջվել: Վերջիններս Երևանի ընդհանուր իրավասության դատարան հայցադիմումներ են ներկայացրել. Հենրի Սարխոշյանի՝ աշխատանքից ազատվելու վերաբերյալ հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնվելու վերաբերյալ հայցադիմումն ընդունվել է վարույթ (հիմք՝ 2022 թվականի մարտի 16-ի ԵԴ/10145/02/22 որոշում), իսկ Հարություն Հովհաննիսյանի՝ 2022 թվականի հունվարի 07-ի աշխատանքից ազատելու վերաբերյալ թիվ 06-Ա հրամանն անվավեր ճանաչելու վերաբերյալ հայցադիմումը թերությունները վերացնելու և հայցադիմումը կրկին ներկայացնելու նպատակով վերադարձվել է (հիմք՝ 2022 թվականի մարտի 03-ին ԵԴ/8191/02/22 որոշում), հայցադիմումում առկա թերությունները վերացվել և 2022 թվականի մարտի 21-ին կրկին ներկայացվել է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի դ) կետի համաձայն՝ դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե՝ դատարանի վարույթում գտնվում է միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով գործ:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի

0047, ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am

1-ին կետը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետը և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 1-ից 7-րդ գլուխների պահանջները, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 755-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 13-րդ ենթակետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնում 2022 թվականի փետրվարի 18-ին հարուցված թիվ 180222-184 վարչական վարույթը կարճել՝ իրավախախտման բացակայության և դատարանի վարույթում միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով գործ գտնվելու հիմքով:

2. Սույն որոշումը ծանուցել «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արևիկ Մկրտչյանին, էլ. փոստ՝ christineghasumyan@gmail.com և փաստաբան Քրիստինե Ավագյանին, էլ. փոստ՝ info.aipg@gmail.com:

Ծնորհակալություն համագործակցության համար,

X

ՀԱԿՈԲ ԱՎԱԳՅԱՆ

Սույն վարչական ակտն ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակիցներին իրազեկելուն հաջորդող օրվանից

Սույն վարչական ակտն ստանալու օրվանից 2 ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին:

Սույն վարչական ակտն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածով սահմանված ժամկետում կարող է բողոքարկվել վարչական դատարան:

0047, ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Ալմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107